Գործ N ՇԴ3/0030/01/17

Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
Մասնակցությամբ՝
ՄԵՂԱԴՐՈՂ՝ Վ. ՄԿՐՏՉՅԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆՆԵՐ՝ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ

2017 թվականի սեպտեմբերի 07-ին Գյումրի քաղաքում, դռնբաց դատական նիստում քննության առնելով քրեական գործն ըստ մեղադրանքի
Արման Գևորգի Սարգսյանի՝ ծնված 1980 թվականի հուլիսի 17-ին Գյումրի քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին երկու անչափահաս երեխա, նախկինում չդատված, զբաղեցնում է ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ավագ օպերլիազորի պաշտոնը, հաշվառված բնակվում է քաղաք Գյումրի, Տիմիրյազևի փողոց, տուն 53 հասցեում: Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Գործի դատավարական նախապատմությունը.
2016 թվականի հուլիսի 28-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին առընթեր հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Ա.Օհանյանը ՀՀ ոստիկանության պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, խոշոր չափերով կաշառք ստանալու, ցուցմունք տալու համար կաշառելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 340-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև կաշառք տալու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցել է թիվ 62219916 քրեական գործը:
2017 թվականի փետրվարի 24-ին Արման Գևորգի Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա զբաղեցնելով ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորի պաշտոնը, 2016թ. դեկտեմբերի 18-ից 20-ն ընկած ժամանակահատվածում թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2010թ. մարտի 18-ի թիվ 270 Ն որոշմամբ սահմանված կարգի խախտմամբ ապօրինի կերպով ձեռք է բերել և մինչև 2016թ. դեկտեմբերի 23-ն առանց իրացնելու նպատակի ՀՀ ոստիկանության Ախուրյանի բաժնի իր աշխատասենյակում ապօրինի կերպով պահել է խոշոր չափ հանդիսացող՝ 0,8 գրամ ընդհանուր քաշով տրամադոլ տեսակի հոգեմետ ակտիվ բաղադրատարր պարունակող 8 սրվակ հոգեմետ դեղամիջոց, որոնք 2016թ. դեկտեմբերի 23-ին ժամը 13:47-ին ոստիկանության Ախուրյանի բաժնի Ա.Սարգսյանի աշխատասենյակում կատարված խուզարկության ժամանակ հայտնաբերվել են նրա աշխատանքային սեղանի դարակից՝ ‘Трамадол’ գրառմամբ երկու տուփերի մեջ:
Արման Գևորգի Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է

՝Ստորագրություն չհեռանալու մասին՞:
2017 թվականի մարտի 17-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Ապացույցների հետազոտում և գնահատում.
Քրեական գործի դատական քննության ընթացքում ամբաստանյալ Արման Գևորգի Սարգսյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չճանաչեց և հրաժարվեց ցուցմունք տալուց:
Արման Գևորգի Սարգսյանին վերագրվող մեղադրանքը հիմնավորվել է դատաքննությամբ հետազոտված հետևյալ ապացույցների բավարար ամբողջությամբ.
Ամբաստանյալ Արման Գևորգի Սարգսյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ աշխատում է ոստիկանության համակարգում 2004 թվականից, ներկայումս զբաղեցնում է Ոստիկանության Ախուրյանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ավագ օպերլիազորի պաշտոնը: Այդ պաշտոնին նշանակվել է 2016թ. հոկտեմբերի 26-ին, մինչ այդ զբաղեցրել է նույն բաժանմունքի օպերլիազորի պաշտոնը: Ինքը որպես բաժնի ավագ օպերլիազոր սպասարկում է բաժնի՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը, իսկ մինչ այդ սպասարկել է վարչական տարածք: Ինքն այդ ոլորտը սպասարկել է միայնակ: Իր աշխատասենյակը գտնվում է բաժնի 3-րդ հարկում, որտեղ տեղակայված է քրեական հետախուզության բաժանմունքը: Ինչ վերաբերվում է սրվակներին, ապա դրանք իրեն տվել էր իր ծանոթ՝ Անդրանիկը, ով աշխատում է Ախուրյանի զինվորական կոմիսարիատում: Նա դրանք տվել էր իրեն խուզարկությունից մի 3-4 օր առաջ իրենց բաժնի մոտ՝ ասելով, որ դրանք իր տատիկի՝ Սեդա Նիկոյանի դեղերն են, որոնք նրա մահից հետո մնացել է նրանց տանը և նա չգիտի, թե ինչ պետք է անի դրանք, քանի որ դրանք հոգեմետ դեղեր են, որոնք նրանք գնել են այն պատճառով, որ տատիկը հիվանդ է եղել քաղցկեղով: Սակայն տատիկը մահացել է և այդ դեղերից 8 հատը չի հասցրել օգտագործել: Նա իրեն հարցրել է, թե այդ դեղերը իրեն պետք է տա, թե բժշկին, ինքն էլ պատասխանել է, որ իրեն չպետք է տա, այլ բժշկին: Նա իրեն ասել է. ՝Որ տամ քեզ, կտաս բժշկին՞, ինքն էլ համաձայնվել է: Անդրանիկը տեղյակ էր, որ ինքը աշխատում է ոստիկանության բաժնի այդ ոլորտում, կարծում է, որ այդ մասին իմացել է խոսակցություններից, քանի որ ոստիկանության բաժինը և զինկոմիսարիատը դեմ դիմաց են: Ինքը վերցրել է դրանք նրա մոտից այն պատճառով, որ դրանք չմնան նրա մոտ, քանի որ ինքը որպես օպերլիազոր տեղյակ է, որ հոգեմետ դեղերի ապօրինի շրջանառությունն արգելված է: Դրանից հետո դրանք դրել է ոստիկանության բաժնում գտնվող իր աշխատանքային սեղանի դարակում, իսկ խուզարկության ժամանակ նույն դարակից ներկայացրել է քննիչին: Ինքը մոռացել է դրանք հանձնել բժիշկ Կիրակոսյանին, որովհետև զբաղված է եղել առօրյա գործերով: Նույնիսկ դրանք դրել էր իր աշխատանքային սեղանի դարակում, որպեսզի բացելուց հիշեր և տաներ հիվանդանոց և հանձներ Կիրակոսյանին: Թվով 8 հատ լիքը ՝Տրամադոլ՞ սրվակների հետ, Անդրանիկն իրեն տվել է նաև 2 հատ դատարկ սրվակ, որոնք ընդհանուր կազմել են 10 հատ, իրենց տուփերի մաջ, ամեն տուփի մեջ կար 5-ական սրվակ: Իսկ ինչ վերաբերվում է իր կողմից ներկայացված երկու հատ կաթուցիչին, ապա դրանք ինքն է անձամբ վերցրել խուզարկությունից մոտ 10 օր առաջ Ախուրյանի տարածքում գտնվող ՝Բուլվարնի՞ տանող ճանապարհին գտնվող քանդած շենքերի միջից: Այդ վայրը լքված շենք է, շինություն է և որպես կանոն թմրամոլներն հաճախ են լինում այդ վայրում, որի պատճառով իրենց կողմից սահմանվել է օպերատիվ հսկողություն բոլոր նման վայրերում: Այդ կաթուցիչների վերցնելու նպատակն այն էր, որ ինքը որպես օպերլիազոր տեղյակ է, որ ներկայումս թմրամիջոց օգտագործող անձինք կանաբիսի խմբի թմրամիջոցը, այսպես կոչված ՝պլանը՞ օգտագործում են ոչ թե սիգարետի մեջ լցնելով, այլ լցնում են կաթուցիչի՝ ՝պիպետկայի՞ մեջ և այդ կերպ են ծխում՝ օգտագործում: Ինքը

դրանք վերցրել է, որպեսզի բաժնի մյուս ծառայողներին ցույց տա և նրանք ծառայության կամ գիշերային շրջագայությունների ժամանակ ուշադիր լինեն, տեղյակ պահեն ոստիկանության բաժնին: Դրանք ինքը ցույց է տվել ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորներին՝ Նիկոլային և Հովհաննեսին: Այդ երկու կաթուցիչը վերցնելուց ինքը այդ հանգամանքը չի արձանագրել, քանի որ դրա կարիքը չկար, իսկ չի ոչնչացրել՝ մտածելով, որ կարող է դեռ կարիք լինի էլի որևէ մեկին ցույց տալու: Նշել է նաև, որ ներկայումս ինքը տեղյակ է, որ այդ դեղերը ոչ թե հիվանդանոցն է տալիս հիվանդին, այլ հիվանդն է գնում դեղատնից, բժիշկ-ուռուցքաբանի դեղատոմսի հիման վրա: Հետո հիվանդը ձեռք է բերում իր միջոցներով այդ դեղը և չկա որևէ կարգ, որի հիման վրա հիվանդի հարազատները պարտավոր են տրամադրելը հետ վերադարձնեն բժշկին: Ինքը բժշկի հետ չի խոսել, քանի որ մտածել է, որ կգնա հիվանդանոց և դրանք կհանձնի Ախուրյանի հիվանդանոցի բժիշկ-ուռուցքաբան Կիրակոսյանին: Անդրանիկից այդ սրվակները վերցնելու հանգամանքը ինքը որևէ կերպ չի արձանագրել, որովհետև իր նպատակն եղել է այն, որ դրանք չմնան քաղաքացու մոտ, քանի որ տրամադրելը հոգեմետ է: Ինքը ոստիկանության բաժնում որևէ մեկին չի զեկուցել այդ մասին, քանի որ չի կարծել, որ դրա կարիքը կա: Որևէ նորմ չկա սահմանված, որ ինքը իրավունք ունի կամ պարտավոր է քաղաքացուց վերցնել նման դեղամիջոց թեկուզև բժշկին հանձնելու համար: Նշել է նաև, որ որպես օպերլիազոր ինքն ամսվա մեջ երկու անգամ գնում է Ախուրյանի հիվանդանոց, ծննդատուն, որտեղ մասնակցում է բժիշկների կողմից օգտագործված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործած սրվակների ոչնչացմանը, որի մասին կազմում է արձանագրություն և ստորագրում է: Ինքը մտածել է, որ տրամադոլի դեպքում նույնպես այդպես է արվում, սակայն ներկայումս պարզել է, որ տրամադոլի դեպքում նման կարգ չկա: Նշել է նաև, որ ինքը ստորագրել է համապատասխան թույլտվություն Ս.Նիկոյանի համար այն մասին, որ նա հիվանդ է և պետք է դեղ ստանա և դրանից ելնելով էլ մտածել է, որ պետք է դրանք վերցվի և ոչնչացվի: Այդ թույլտվությունը ստորագրվում է օպերլիազորի կողմից և կցվում է հիվանդի քարտին, որն արվել է նաև Ս.Նիկոյանի դեպքում: Իր հիշելով Ս.Նիկոյանը մի քանի օր է ստացել այդ դեղամիջոցը, սակայն չի կարող ասել, թե կոնկրետ ով է ձեռք բերել դրանք Սեդայի համար:
/հատոր 1՝ գ.թ. 141-145/:
Վկա Հարություն Գրիշայի Կիրակոսյանի դատաքննական ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է Ախուրյան բժշկական կենտրոնի բժիշկ-ուռուցքաբանը: Եթե օնկո հիվանդները ծանր վիճակում գալիս են իրենց մոտ, ձևակերպվում են նրանց համար օնկո ամբուլատոր քարտ, և բուժումը սկսում են սովորական ցավազրկումներով՝ ՝Անալգին՝ և այլն, սակայն եթե դրանք արդեն չեն օգնում հանձնաժողովի միջոցով որոշվում է ՝տրամադոլ՝ դեղամիջոց նշանակել: Հանձնաժողովի մեջ մտնում են ինքը և ընտանեկան բժիշկը, ով ստորագրում է, որ համաձայն է, որ հիվանդին ՝տրամադոլ՝ տեսակի դեղամիջոց նշանակվի: ՝Տրամադոլ՝ տեսակի դեղամիջոցի սրսկումն ինքն է որոշում՝ տեղյակ պահելով Ոստիկանությանը, գլխավոր բժիշկին և հիվանդի ընտանեկան բժիշկին: Ոստիկանությունը տեղեկացվում է տարբեր ձևերով. կարող են հիվանդի հարազատներին տալ թուղթ, որ տանեն Ոստիկանություն, կամ խնդրեն Ոստիկանության աշխատակցին, որ գան հիվանդանոց: Դրանից հետո ոստիկանության աշխատակիցը տրամադրում է հիվանդատերին կամ անձամբ է ներկայացնում տեղեկանք այն մասին, որ տեղեկացված է, որ հիվանդին նշանակվել է ՝տրամադոլ՝ տեսակի դեղամիջոց: Իր կողմից Սեդա Նիկոյանի համար տրամադրվել է դեղատոմս, որպեսզի նրա որդին սահմանված կարգով դեղատնից Սեդա Նիկոյանի համար ձեռք բերի ՝տրամադոլ՝ տեսակի հոգեմետ դեղամիջոց՝ որպես ցավազրկող: Ինքը նշանակել է 10 սրվակ՝ օրական 2 անգամ օգտագործելու համար, սակայն հիվանդը 2 սրվակ ստանալուց հետո մահացել է: Գործընթացը կատարել է կարգին համապատասխան, գրանցում է

կատարել Սեդա Նիկոյանի ամբուլատոր քարտում, լրացրել է համապատասխան դեղատոմս, ինչից հետո Ս.Նիկոյանի որդուն ուղարկել է հիվանդի և նրա լուսանկարներով, նաև հիվանդի ու նրա անձնագրերի պատճեններով Ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատակից Արման Սարգսյանի մոտ, որպեսզի նրանից նույնպես թույլտվություն ձեռք բերվի տվյալ տեսակի դեղամիջոցը ձեռք բերելու համար: Ինքն իր հեռախոսահամարով զանգահարել է Արման Սարգսյանի հեռախոսահամարին և հայտնել, որ հիվանդի հարազատին ուղարկում է նրա մոտ փաստաթղթերով հանդերձ: Իրենք այդ հարցով մշտապես միմյանց հետ հեռախոսակապի մեջ են եղել: Արման Սարգսյանի կողմից տեղեկանքը տրամադրելուց հետո, հիվանդի հարազատը այն ներկայացրել է իրեն: Նշված տեղեկանքի մեջ գրվում է հիվանդի անունը, ազգանունը, տարեթիվը, ինչ հիվանդ է, ինչ դեղորայք է տրվելու, հեռախոսահամարը և իրավապահ մարմնի աշխատակցի պաշտոնը: Տվյալ դեպքով նշված տեղեկանքի մեջ այդ բոլոր հանգամանքները գրված են եղել: Տրամադոլ տեսակի դեղամիջոցը հոգեմետ նյութ է և այն Գյումրիում հնարավոր է ձեռք բերել միայն մի քանի դեղատներում: Հիմնականում ինքն ուղարկում է հիվանդներին Ռիժկովի փողոցում գտնվող դեղատուն, քանի որ այն մոտ է գտնվում, սակայն ինքը դեղատոմսի մեջ չի նշում որ դեղատնից ձեռք բերել: Տրամադոլ դեղամիջոցը գնելուց հետո, ինքը հիվանդատերին բացատրում է, թե ինչպես և որտեղից պետք է սրսկել, և այդ սրսկումը կարող է հիվանդատերն է անել: Նշեց նաև, որ տրամադոլ տեսակի դեղամիջոցի օգտագործված և չօգտագործված սրվակների վերադարձման կարգ սահմանված չէ: Երբևէ չի եղել դեպք, որ իրեն վերադարձնեն տրամադոլ տեսակի դեղամիջոցը, քանի որ ինքը միշտ հիվանդատերերին ասել է, որ տանեն պահեն նրանց տանը, քանի որ ոստիկանության աշխատակիցը կարող է ցանկացած պահին գալ ու ստուգել: Թմրամիջոցների դեպքում հիվանդատերը թմրամիջոցը պարտավոր է հանձնել իրենց, անկախ նրանից, թե սրվակը լիքն է, թե դատարկ, և իրենք ոչնչացնում են: Դա սահմանված է հրամանով: Թմրամիջոցի ոչնչացմանը մասնակցում են գլխավոր բժիշկը, ոստիկանության աշխատակիցը, ինքը և քույրը: Իսկ տրամադոլ տեսակի հոգեմետ նյութի դեպքում ինքը հրաման չունի այն պարտադիր հիվանդատերից վերցնելու, հետևաբար եթե նույնիսկ իրեն բերեն և ցանկանան վերադարձնել հիշյալ հոգեմետ նյութը, ապա ինքը կհրաժարվի այն վերցնել: Նշեց նաև, որ դեպքի ժամանակ Արման Սարգսյանը նոր էր ընդունվել աշխատանքի և վերջինս շատ օրենքներ այդ հարցի վերաբերյալ դեռ չգիտեր: Այս գործը Ա.Սարգսյանի համար առաջինն էր, և ինքը ոչ մի անգամ դեռ չէր առնչվել տրամադոլ դեղամիջոցի հետ: Ա.Սարգսյանը միամիտաբար է վերցրել այդ դեղամիջոցը հիվանդատերից և նրա նպատակն եղել է այն իրեն հանձնելը, դրա մասին ինքը խոսակցություններից է տեղեկացել: Նշեց նաև, որ երբևէ Արման Սարգսյանի հետ չի քննարկել Սեդա Նիկոյանի հարազատների կողմից տրամադոլ տեսակի դեղամիջոցն իրեն վերադարձնելու հարցը, ինչպես նաև Ա.Սարգսյանը իրեն չի հայտնել, որ հիշյալ դեղամիջոցը նրա մոտ է, և նա պետք է վերադարձնի իրեն: Հայտնեց
նաև, որ իր աշխատանքի բնույթից ելնելով հիշում է, որ Սեդա Նիկոյանի մահվան մասին ինքը զանգահարել և տեղեկացրել է Արման Սարգսյանին, սակայն չի պնդում:
/10.05.2017 թվականի դատական նիստի արձանագրություն/:
Վկա Անդրանիկ Արմենի Ամբարդարյանի դատաքննական ցուցմունքով այն մասին, որ աշխատում է Ախուրյանի զինկոմիսարիատում, ճանաչում է Ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատակից Արման Սարգսյանին, քանի որ իր և Արմանի աշխատանքային վայրերը գտնվում են հարևանությամբ՝ մոտ 50 մետր հեռավորության վրա: Իր տատիկը՝ Սեդա Նիկոյանը, տառապել է քաղցկեղով, մահացել է 2016 թվականի նոյեմբերի 12-ին: Ս.Նիկոյանը կյանքի վերջին օրերին ունեցել է ուժեղ ցավեր և իր հայրը՝ Արմեն Ամբարդարյանը, սահմանված կարգով բժշկի թույլտվությամբ և նրա կողմից տրված դեղատոմսի հիման վրա դեղատնից ձեռք է բերել 10 սրվակ տրամադոլ տեսակի դեղամիջոց, որից իր տատիկն

օգտագործել է 2 հատը, իսկ 8 հատը չի օգտագործել և նրա մահից հետո մնացել է իրենց տանը: 2016 թվականի դեկտեմբերի 18-ին՝ Սեդա Նիկոյանի մահվան 40 օրը լրանալուց հետո, հավաքել են վերջինիս սենյակը, և տեսել են շատ մնացած դեղեր, և քանի որ՝ տրամադրոլ՝ տեսակի դեղամիջոցը ձեռք են բերել հատուկ թույլտվությամբ, որոշել են մնացած լիքը 8 սրվակները և 2 դատարկ սրվակները հետ վերադարձնել Արման Սարգսյանին, այն պատճառով, որ նա նույնպես դեղամիջոցը ձեռք բերելու ընթացքում առնչություն է ունեցել այդ գործընթացին: Ինքը չի ցանկացել դեղամիջոցը բժիշկին վերադարցնել: Այդ օրը նշված դեղամիջոցը դրել է իր գրպանում: 2016 թվականի դեկտեմբերի 19-ին կամ 20-ին, կոնկրետ օրը չի հիշում, Արմանին պատահական տեսնելով Ոստիկանության բաժնի մոտ, հարցրել է, թե ինչ պետք է անի այդ դեղամիջոցների հետ, և ցանկացել է դրանք տալ նրան, սակայն նա չի համաձայնվել և ասել է, որ նա մեկ ամսվա աշխատող է և տեղյակ չէ, թե դեղերը պետք է վերցնի, թե ոչ, կամ արձանագրություն պետք է կազմվի, թե ոչ, ասել է նաև, որ ինքը պահի դրանք իր մոտ մինչև նա ճշտի, թե ինչ պետք է անել: Արմանը չէր ուզում վերցնել, սակայն ինքը սկսել է համոզել վերջինիս, որ վերցնի, որպեսզի իր մոտ չմնան՝ ասելով, որ երբ որոշվի, թե ինչ պետք է արվի այդ դեղամիջոցների հետ, իրեն կանչեն, և ինքը կստորագրի որտեղ պետք լինի, ու տվել է այդ դեղամիջոցը Արմանին: Այդ ժամանակ դրսում դրա վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի կազմվել: Ա.Սարգսյանն այդ դեղամիջոցը վերցնելուց հետո իրեն ասել է, որ հետո կզանգահարի, կկանչի իրեն, որպեսզի արձանագրություն կազմեն: Նշեց նաև, որ մինչև Արման Սարգսյանին տեսնելը և դեղամիջոցը հանձնելը ինքն որևէ մեկի հետ չի խորհրդակցել, թե ինչ պետք է անել այդ դեղամիջոցի հետ, բացի այդ որևէ մեկն իրենցից չի պահանջել վերադարձնել այդ դեղամիջոցի սրվակները, դա արել են իրենց նախաձեռնությամբ, որպեսզի չմնա իրենց մոտ: Նշեց նաև, որ իր տատիկը մոտ 6 ամիս հիվանդ է եղել, շատ սրսկման դեղեր են օգտագործել, սակայն սրվակները չեն պահել, այլ թափել են: Տվյալ դեպքում՝ տրամադրոլ՝ տեսակի դեղամիջոցի սրվակները պահել են, քանի որ և բժիշկը, և դեղատանը զգուշացրել էին, որ սրվակները պետք է պահել, սակայն, թե ում պետք է հետո վերադարձնել, որևէ բան չեն ասել:
/10.05.2017 թվականի դատական նիստի արձանագրություն/:
Վկա Աշոտ Արմենի Օհանյանի դատաքննական ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին առընթեր ՀԿԳ ավագ քննիչ: Թիվ 62219916 քրեական գործն քննվել է բացառապես իր վարույթում: Որևէ այլ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ նշված քրեական գործով նախաքննություն չի կատարել: Քրեական գործը հարուցվել և ավարտվել է իր կողմից: Նշված քրեական գործի նախաքննության ընթացքում իր կողմից դատարան է ներկայացվել միջնորդություն՝ Արման Սարգսյանի աշխատասենյակում խուզարկություն կատարելու վերաբերյալ: Միջնորդությունը բավարարվել է և որոշումը հանձնարարվել է իրեն կատարման համար: Իր կողմից խուզարկությունը կատարվել է 23.12.2016թ. Ոստիկանության Ախուրյանի բաժնում: Խուզարկություն կատարելու մասին արձանագրությունը կազմվել է իր կողմից, մասնակցել են համապատասխան անձինք, որոնց անունները գրված են արձանագրության մեջ: Արձանագրության մեջ առկա ձեռագիրն իրենն է: Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ նշված արձանագրությունն իր կողմից ստորագրված չէ, ապա թեև չի կարող մտաբերել, թե ինչպես է ստացվել, որ այդ պահին չի ստորագրել, սակայն համոզված է, որ դա պարզապես վրիպակի արդյունք է, ոչ այլ ինչ: Նույն պատճառով էլ արձանագրության մեջ չեն նշվել իր տվյալները: Իր ունեցած ձևաթղթերում, որոնցով երկար տարիներ արդեն աշխատում է, մասնակիցների տվյալները ձեռագիր է լրացվում: Նշեց նաև, որ արձանագրությունը կազմելիս այնպես էր ստացվել, որ բովանդակային առումով արձանագրության ձևաթղթի թուղթը չի բավարարել, որի պատճառով իր կողմից 1 հատ A4 ֆորմատի թուղթ է ավելացվել: Նշեց նաև, որ արձանագրության և որոշման օրինակը տրամադրվել է անձին, ում մոտ կատարվել է

խուզարկությունը:
/28.07.2017 թվականի դատական նիստի արձանագրություն/:
Վկա Միսակ Մեդրակի Սարգսյանի դատաքննական ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է Ոստիկանության Ախուրյանի բաժնի օպեր գծով տեղակալ: Արման Սարգսյանն աշխատել է Ոստիկանության Ախուրյանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում որպես ավագ օպերլիազոր: Դեպքից մեկ ամիս առաջ էր նշանակվել նշված պաշտոնին: Որպես նոր աշխատող իրենք նրան ուղղություններ են ցույց տվել, քանի որ նախկինում նա չի տիրապետել այդ աշխատանքին: Ա.Սարգսյանը միայնակ է սպասարկել թմրամիջոցների ոլորտը և նաև սպասարկել է նրա նախկին տարածքը: Այսինքն, 2 աշխատանք համատեղ է իրականացրել: Թմրամիջոցների ոչնչացման կարգի հետ Ա.Սարգսյանն արդեն ծանոթ էր, քանի որ նախքան դեպքը 2 անգամ գնացել է հիվանդանոց և ոչնչացրել է դրանք օրենքով սահմանված կարգով: Իսկ ինչ վերաբերվում է հոգեմետ դեղերին, ապա դրանց ոչնչացման կարգ գոյություն չունի: Դեպքից առաջ՝ երևի մոտ 15-20 օր առաջ, մինչև Արմանի աշխատասենյակի խուզարկություն կատարելը, Արմանն իրեն բանավոր հարցրել է, որ եթե մահացած մարդ կա, ապա հոգեմետ դեղերը ինչպես են ոչնչացնում: Արմանն իրեն կոնկրետ դեպքի մասին ոչինչ չի ասել: Ինքն անակնկալի է եկել, քանի որ իրենք երբևէ հոգեմետ դեղեր չեն ոչնչացրել, և ինքն էլ չգիտի դրանց ոչնչացման կարգը: Իր հիշելով պրակտիկայում այլ բաժնում եղել է դեպք, որ կամավոր բերել հանձնել են հոգեմետ նյութը, հետո դատախազության հետ կապված ահագին խնդիրներ են առաջացել: Այդ ժամանակ ինքն Արմանին ասել է, որ պետք է ճշտել, թե հոգեմետ նյութի ոչնչացման ինչ կարգ գոյություն ունի: Այդ օրերին իրենք ծանրաբեռնված են եղել, շղթայական բնակարանային գողություններ են եղել և, քանի որ բացահայտման աշխատանքների համար օպեր աշխատողները քիչ են եղել, Արմանն էլ է ներգրավված եղել: Ծանրաբեռնվածության պատճառով ինքը Արմանի ասածներին կարևորություն չի տվել, Արմանն էլ միշտ ներգրավված է եղել այլ աշխատանքների մեջ, և ինքը չի էլ իմացել, թե այդ դեղն երբ են բերել տվել Արմանին, ինչպես նաև մտքով էլ չի անցել, որ ճշտեր ոչնչացման կարգ կա, թե ոչ: Երբ Արմանն իրեն ասել է, նրան դեռ դեղամիջոցը չէին տվել: Իր կարծիքով Ա.Սարգսյանը սույն գործով ցուցաբերել է անփութություն, քանի որ երբ ինքը քաղաքացուց վերցրել է դեղամիջոցը, նա պետք է տեղյակ պահեր իրենց, որպեսզի զեկուցագիր ներկայացվեր: Նշեց նաև, որ դեպքից հետո է միայն ինքն իմացել, որ Ա.Սարգսյանը տրամադրել է տեղեկանք հոգեմետ դեղամիջոցը գնելու համար: Ինքն ամեն տեղեկանք տրամադրելուց տեղյակ չի լինում: Հայտնեց նաև, որ թմրամիջոցների դեպքում թմրամիջոցի ստացողը բժիշկի մոտ է գնում և հանձնում թմրամիջոցը, այնուհետև իրենց աշխատակիցը գնում է հիվանդանոց և հանձնաժողովի հետ միասին օրենքով սահմանված կարգով ոչնչացնում են թմրամիջոցը: Հոգեմետ նյութերի դեպքում բժիշկները հոգեմետ նյութերը չեն ընդունում: Նշեց նաև, որ երբ Արմանը հարցրել է հոգեմետ դեղի ոչնչացման կարգի մասին, ինքը չի ասել Արմանին, որ նա իրավասություն չունի քաղաքացուց հոգեմետ դեղը վերցնելու, քանի որ ենթադրել է, որ նա դրա մասին պետք է գիտենար:
/22.08.2017 թվականի դատական նիստի արձանագրություն/:
Վկա Արմեն Վասենյայի Ամբարդարյանի նախաքննական ցուցմունքով այն մասին, որ Սեդա Նիկոյանը հանդիսացել է իր մայրը, ով տառապել է ենթաստամոքսային գեղձի չարորակ ուռուցքով, մահացել է նույն հիվանդությունից 2016 թվականի նոյեմբերի 12-ին: Նա այդ հիվանդությամբ տառապել է մի քանի ամիս, վերջին ամիսներին շատ ծանր վիճակում էր, անկողնային հիվանդ էր, ուներ ուժեղ ցավեր: Կյանքի վերջին օրերին նրա ցավերն ուժեղացել են, և իրենք այդ հարցով դիմել են Ախուրյանի բժշկական կենտրոնի բժիշկ ուռուցքաբան Կիրակոսյանին, ով եկել է իրենց տուն և հետազոտել է Սեդա Նիկոյանին, ու քանի որ վերջինս գտնվել է ուժեղ ցավերի մեջ, նշանակել է հոգեմետ հանդիսացող տրամադոլ տեսակի դեղամիջոց, որպեսզի մեղմացվի նրա ցավերը: Բժիշկ Կիրակոսյանն ասել է, որ այդ դեղը

հնարավոր չէ առանց թույլտվության ձեռք բերել հիվանդանոցից կամ դեղատնից: Նա ասել է, որ դրա համար ինքը պետք է թույլ տա, որպեսզի ինքը գնա և այն կարողանա ձեռք բերել դեղատնից: Կիրակոսյանն ասել է, որ ինքը պետք է գնա նաև Ոստիկանության Ախուրյանի բաժին և այնտեղից պետք է թույլ տան, որ ինքը կարողանա գնել այդ դեղը: Նա ասել է, որ ինքը պետք է գնա Ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատակից՝ Արման Սարգսյանի մոտ: Այդ պատճառով ինքը գնացել է Ոստիկանության Ախուրյանի բաժին, որտեղ առաջին անգամ տեսել է Արման Սարգսյանին: Ինքը չի հիշում, թե բժիշկ Կիրակոսյանն իր ներկայությամբ խոսել է Ա.Սարգսյանի հետ, թե ոչ, սակայն երբ ինքը գնացել է Ա.Սարգսյանի մոտ, վերջինս արդեն տեղյակ էր: Նա իրեն ասել է, որ բժիշկը նրան զանգել է: Ինքը չի հիշում՝ Արմանի, թե բժշկի ասելով է Ոստիկանության Ախուրյանի բաժին տարել 2 հատ իր լուսանկարից, ինչպես նաև իր հիշելով՝ մայրիկի լուսանկարը և անձնագրի պատճենը: Ինքը չի հիշում, թե դրանք տարել է Ոստիկանություն Արմանի ասելուց հետո, թե որ արդեն բժիշկն էր իրեն ասել, որ ինքը դրանք տանի իր հետ Ոստիկանություն: Արմանն իրեն տվել է ինչ-որ փոքր թուղթ, որը տարել և տվել է բժիշկին: Նա տվել է իրեն ՝ռեցեպտ՝, որն ինքը տարել է Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոցում գտնվող իր հիշելով ՝Ալֆա Ֆարմ՝ դեղատուն: Այդտեղ ինքը ներկայացրել է դեղատոմսը, ստորագրել է դրա վրա, որ ստացել է դեղերը, լրացրել է իր անձնական տվյալները, և գնել է նշված դեղամիջոցից 10 սրվակ ու տարել տուն: Իր հիշելով այդ դեղատոմսի մեջ գրված էր, որ ինքը կարող է գնել այդ դեղից 10 հատ: Այդ դեղերից իր մայրը հասցրել է օգտագործել 2 սրվակ, որից հետո մահացել է, իսկ թիվ 8 սրվակը մնացել է իրենց տանը: Դրանից հետո իրենք դրա մասին չեն մտածել և հիշել, քանի որ զբաղված են եղել մոր հուղարկավորության գործերով: 2016 թվականի դեկտեմբերի 18-ին տեղի է ունեցել մոր մահվան 40 օրվա արարողությունը, և այդ ժամանակ, երբ նկատել է նշված դեղամիջոցի դատարկ և լիքը սրվակները, և հիշելով, որ դրանք ձեռք է բերել դժվարությամբ և բժիշկն ասել էր, որ դրանք արգելված են, որդուն՝ Անդրանիկ Ամբարդարյանին ասել է, որ դրանք տանի և տա կամ բժիշկին կամ ոստիկան Արման Սարգսյանին, քանի որ ինքն է նրանց հետ առնչվել այդ դեղամիջոցը ձեռք բերելու ժամանակ: Ինքն անձամբ չի տարել, քանի որ վատառողջ է եղել, և այդ կամ հաջորդ օրը որդուց տեղեկացել է, որ նա հանդիպել է Արման Սարգսյանին և այդ սրվակները հանձնել նրան՝ բժշկին տալու համար: Ինքը մանրամասներ չի հարցրել, թե նրանք որտեղ են հանդիպել ու ինչ են խոսել, բացի այդ ինքը այլևս այդ թեմայի շուրջ Անդրանիկի հետ չի խոսել: Արմանին ինքը տեսել է միայն մեկ անգամ՝ դեղը գնել թույլ տալու օրը: Նշել է նաև, որ ինքը երբևէ Արմանին չի զանգահարել, ոչ էլ Արմանը իրեն, նույնիսկ նրա հեռախոսահամարը ինքը չունի: Նշել է նաև, որ ոչ բժիշկը, ոչ էլ Արման Սարգսյանը իրենցից չեն պահանջել վերադարձնել դրանք, այլ իրենք դա արել են իրենից նախաձեռնությամբ, սակայն տեղյակ չէ, թե ինչու Արման Սարգսյանը չի վերադարձրել դրանք բժշկին, այլ պահել է իր մոտ: Որքանով հիշում է, երբ Անդրանիկը տարել տվել է դեղերը Արմանին, վերջինս ասել է, որ տալու է բժիշկին, սակայն ավելին հայտնել չի կարող:
/հատոր 2՝ գ.թ. 39-42/:
Արման Սարգսյանի Ոստիկանության Ախուրյանի բաժնում գտնվող աշխատասենյակում խուզարկություն կատարելու մասին՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի արձանագրությամբ, ըստ որի՝ հիշյալ աշխատասենյակում կատարված խուզարկության ընթացքում Արման Սարգսյանը ներկայացրել է 8 հատ լիքը և 2 հատ դատարկ ՝տրամադոլ՝ գրառումով դեղամիջոցի սրվակ և հայտնել իր կողմից վկայի կարգավիճակում տրված ցուցմունքով հայտնած հանգամանքներին նույնաբովանդակ հանգամանքներ դրանց ձեռքբերման մասով:
/հատոր 1՝ գ.թ. 124-128/:
Դատաքիմիական փորձաքննության թիվ 16-3622 եզրակացությամբ, ըստ որի՝ փորձաքննության ներկայացված փակ փաթեթավորմամբ, ՝տրամադոլ՝ և այլ տպատառ գրառումներով պիտակով 5 հատ միանման ապակյա սրվակների մեջ առկա 2-ական մլ

ծավալով անգույն, թափանցիկ հեղուկներից /օբյեկտ 1.1/ և փակ փաթեթավորմամբ, նմանատիպ պիտակով 3 հատ միանման ապակյա սրվակների մեջ առկա 2-ական մլ ծավալով անգույն, թափանցիկ հեղուկներից /օբյեկտ 1.2/ յուրաքանչյուրն իր բաղադրության մեջ պարունակում է 0,1 գրամ տրամադոլ տեսակի հոգեմետ ակտիվ բաղադրատարր, վերահաշվարկած՝ ընդհանուր 8 հատ սրվակներում տրամադոլի ընդհանուր պարունակությունը կազմում է 0,8 գրամ:
/հատոր 2՝ գ.թ. 1-7/:
Ապացույց ճանաչված՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարից ստացված գրությամբ, ըստ որի որևէ իրավական ակտով՝ տրամադոլ՝ դեղի օգտագործված և չօգտագործված սրվակների վերադարձի մասին դրույթ նախատեսված չէ:
/հատոր 2՝ գ.թ. 16, հատոր 3՝ գ.թ. 332-333/:
Ապացույց ճանաչված՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությունից ստացված գրությամբ, ըստ որի՝ Արման Սարգսյանի վրա դրված են եղել թմրամոլության, թմրաբիզնեսի ապօրինի շրջանառության և կավատության դեմ տարվող պայքարի կազմակերպման պարտականությունները և հիշյալ գրության համաձայն՝ վերջինիս գործառութային պարտականությունները, որոնք վերաբերում են անբուժելի հիվանդներին թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր տրամադրելու գործընթացին, սահմանվում և կարգավորվում են՝ Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին՝ ՀՀ կառավարության 2010թ. մարտի 18-ի թիվ 270-Ն որոշմամբ, ինչպես նաև ստացվել է հիշյալ որոշման պատճենը, ոստիկանության բաժնի օպերլիազոր Արման Սարգսյանի գործառութային պարտականությունները և այլ փաստաթղթեր:
/հատոր 2՝ գ.թ. 291-299, հատոր 3՝ գ.թ. 332-333/:
Ապացույց ճանաչված՝ Ախուրյան բժշկական կենտրոնի բժիշկ ուռուցքաբան Հարություն Կիրակոսյանի կողմից Շիրակի մարզի Ազատան գյուղի բնակչուհի Սեդա Նիկոյանի անվամբ լրացված թիվ 1-138 ամբուլատոր քարտի պատճենով, ըստ որի Սեդա Նիկոյանին տրվել է՝ տրամադոլ՝ տեսակի դեղամիջոց:
/հատոր 1՝ գ.թ. 157-166, հատոր 3՝ գ.թ. 332-333/:
Ապացույց ճանաչված՝ Ախուրյան բժշկական կենտրոնի բժիշկ ուռուցքաբան Հարություն Կիրակոսյանի կողմից 11.11.2016 թվականին տրված հոգեմետ դեղի համար թիվ 1866 դեղատոմսի պատճենով, որի հիման վրա Սեդա Նիկոյանի համար ձեռք է բերվել 10 հատ՝ տրամադոլ՝ տեսակի դեղամիջոց:
/հատոր 2՝ գ.թ. 25, հատոր 3՝ գ.թ. 332-333/:

Արման Սարգսյանի աշխատասենյակից խուզարկությամբ հայտնաբերված և իրեղեն ապացույց ճանաչված՝ տրամադոլ՝ տեսակի հոգեմետ դեղամիջոցների 8 սրվակներով:
/հատոր 3՝ գ.թ. 330-331/:

Դատարանի իրավական վերլուծությունները.
ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝՝ Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ՝՝:
ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

(...)՝:
ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը և անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, ինչպես նաև կանխել հանցագործությունները:
2. Այդ խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում հանցագործություններ, ...՝:
ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝՝Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները՝՝:
ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝՝Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով՝՝:
ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է այդ օրենսգրքով:
Քրեական պատասխանատվության հիմքում ընկած է կոնկրետ հանցավոր արարքը: Անձը քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն դեպքում, երբ նրա մտադրությունները, գաղափարները դրսևորվել են կոնկրետ արարքի կատարման մեջ, առարկայացել են այդ արարքում:
Հանցագործությունը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ, արարքի և այն կատարող անձի միասնությունն է:
Քրեական իրավունքն առանձնացնում է հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերը: Հանցագործության օբյեկտիվ տարրերն են օբյեկտը և օբյեկտիվ կողմը, սուբյեկտիվ տարրերն են սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Այսինքն, հանցագործությունը չորս տարրերի միասնություն է՝ հանցագործության օբյեկտ, հանցագործության օբյեկտիվ կողմ, հանցագործության սուբյեկտ և հանցագործության սուբյեկտիվ կողմ:
ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի բովանդակային էությունից հետևում է, որ քրեական պատասխանատվության ենթակա է միայն այն անձը, ում կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքն ուղղակիորեն նախատեսված է քրեական օրենսգրքի հատուկ մասի որևէ նորմով: Իսկ նշված դրույթն ապահովելու համար պետք է իրականացնել անձի կողմից կատարված արարքի ճիշտ որակում:
Արարքի որակումը անձի կողմից կատարված գործողության կամ անգործության և քրեական օրենսգրքի հատուկ մասում տեղ գտած հանցագործության կոնկրետ տեսակի բոլոր հատկանիշների միջև հստակ համապատասխանության բացահայտումը, նույնության հավաստումն ու իրավաբանական ամրագրումն է: Ըստ էության, հանցագործությունների որակման համար հաջորդաբար պետք է պարզաբանել, թե որ հասարակական հարաբերությունների դեմ է ուղղված ոտնձգությունը, այսինքն՝ պետք է որոշվեն հանցագործության սեռային, տեսակային, և անմիջական օբյեկտները, որը հնարավորություն կտա կողմնորոշվելու, թե որ բաժնում, գլխում փնտրել անհրաժեշտ նորմը և որոշել այն հանցակազմերի խումբը, որից հետագայում, ելնելով հանցակազմի օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշներից, կառանձնացվի կատարված

արարքի բոլոր հատկանիշները պարունակող հանցակամը: Քննարկելով կատարված արարքի հատկանիշները, պետք է պարզել, թե դրանք լիովին համընկնում են արդյոք հանցավոր ճանաչված արարքի բոլոր բնութագրիչ հատկանիշներին: Անձի կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքի քրեաիրավական նշանակություն ունեցող անխտիր բոլոր հատկանիշները պետք է համապատասխանեն քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված արարքի հատկանիշներին, այսինքն՝ լրիվ նույնական լինեն ինչպես հանցագործության օբյեկտը, այնպես էլ սուբյեկտը, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշները:
ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասը բաժանված է բաժինների, որոնք էլ իրենց հերթին բաժանված են գլուխների, ինչի նպատակն է պարզել, թե կոնկրետ արարքը որ հասարակական հարաբերությանն է վնաս հասցնում: Այսինքն քրեական օրենսգրքի հատուկ մասը բաժանված է ըստ սեռային օբյեկտների, որոնք էլ իրենց հերթին տարանջատվում են տեսակային օբյեկտների:
ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածը զետեղված է՝Հասարակական անվտանգության, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ՝ վերտառությամբ 9-րդ բաժնում տեսակավորված՝Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ՝26-րդ գլխում, որի անմիջական օբյեկտը բնակչության առողջությունն է, այսինքն՝ այն հասարակական հարաբերությունների ամբողջությունը, որն ապահովում է մարդկանց ֆիզիկական և հոգեկան առողջությունը:
ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:
2. Այլ տեսակի հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում՝:
ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝՝Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պրեկուրսորներ, ինչպես նաև խիստ ներգործող կամ թունավոր նյութեր կամովին հանձնող անձն ազատվում է հանձնված թմրամիջոցները կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, դրանց պրեկուրսորները կամ խիստ ներգործող կամ թունավոր նյութերն ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու համար սույն գլխի 266-րդ, 268-րդ և 275-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվությունից՝՝:
Նշված դրույթների էությունից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով հատկապես նախատեսված է հոգեմետ նյութերին վերաբերելի քրեական պատասխանատվությունից ազատման դեպք՝ կամովին հանձնում:
Նշված դրույթն ինքնանպատակ չէ և չի կարող ձևական բնույթ կրել, այլ պետք է լինի մի մարմին կամ անձ, ով կամովին հանձնողից ընդունում, վերցնում է այդ իրը:
ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 484-Ն որոշմամբ՝ 1988 թվականի դեկտեմբերի 20-ին Վիեննայում ստորագրված՝Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին՝կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմին է նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

‘Ոստիկանության մասին’ ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝
‘Ոստիկանության խնդիրներն են օրենքին համապատասխան ապահովել՝
1) մարդու անվտանգությունը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.
2) հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը.
3) հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործով նախնական քննությունը.
4) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը.
(...)
Ոստիկանության վրա այլ խնդիրներ կարող են դրվել միայն սույն օրենքով:’:
‘Ոստիկանության մասին’ ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝
‘Ոստիկանության գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների վրա:
Ոստիկանությունն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, լիազորությունների իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:
(...)’:
‘Ոստիկանության մասին’ ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝
‘Ոստիկանության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:
Ոստիկանության գործունեությունը կարգավորող այլ օրենքներով և իրավական ակտերով ոստիկանության վրա դրվող պարտականությունները պետք է համապատասխանեն սույն օրենքի 2-րդ հոդվածում թվարկված խնդիրներին:’:
‘Ոստիկանության մասին’ ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝
‘Ոստիկանությունը պաշտպանում է մարդու կյանքն ու առողջությունը, ինչպես նաև այլ իրավունքներն ու ազատությունները, օրինական շահերը, սեփականությունը՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:
(...)’:
‘Ոստիկանության մասին’ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝
‘Ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է՝
1) կանխել և խափանել հանցագործություններն ու այլ իրավախախտումները, բերման ենթարկել հանցանք կամ վարույթ պահանջող այլ իրավախախտում կատարած անձանց, պարզել հանցագործություններ և այլ իրավախախտումներ ծնող պատճառներն ու դրանց նպաստող պայմանները, ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք վերացնելու ուղղությամբ.
(...)
Ոստիկանությունն իրականացնում է նաև օրենքով սահմանված այլ պարտականություններ:’:
ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 806-Ն որոշմամբ հաստատված
‘Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության’ կանոնադրության 8-րդ կետի համաձայն՝
‘Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն իր նպատակների և խնդիրների

իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝
(...)
ժա) թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպում և համակարգում, միջազգային պայմանագրերի հիման վրա թմրամիջոցների, հոգեմետ, խիստ ներգործող և թունավոր նյութերի, ինչպես նաև դրանց բաղադրիչների օրինական շրջանառության նկատմամբ հսկողության իրականացում.
(...)՝:
Ինչպես երևում է վերը նշված դրույթներից, Ոստիկանությունը լիազորված է իրականացնել բնակչության առողջության պահպանմանն ուղղված գործողություններ, որի մեջ է մտնում նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը, ինչպես նաև հոգեմետ նյութերի օրինական շրջանառության նկատմամբ հսկողությունը, ինչի շրջանակներում էլ իրականացվում է հանցագործությունների կանխում և խափանում, հանցագործություններ ծնող պատճառների պարզում և դրանց վերացնելու ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացում:
Այսինքն այն մարմինը, ով կամովին հանձնողից ընդունում, վերցնում է այդ իրը՝ Ոստիկանությունն է և այդ վերցնելը կամ ընդունելն ինքնին չի կարող դիտարկվել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառություն, քանի որ ապօրինի ձեռք բերելն այնպիսի գործողության կատարումն է, որով անձն ապահովում է հոգեմետ նյութին տիրանալու հնարավորությունը, իսկ ապօրինի պահելը՝ ցանկացած դիտավորյալ գործողությունն է, որով անձը ֆիզիկական առումով տիրապետում է այդ նյութը:
Հարկ է նկատել նաև, որ տառացի մեկնաբանությամբ՝ ՝հոգեմետ նյութերի շրջանառություն՝ իրականացվում է նաև հետաքննության, քննչական մարմինների, դատախազության և դատարանների կողմից՝ իրենց լիազորությունների շրջանակում քրեական գործ հարուցելու առիթը ստուգելու, քրեական գործ քննելու ընթացքում հոգեմետ նյութը փորձաքննության կատարման, գործը կամ բողոքը քննելու համար այս կամ այն մարմիններ ուղարկելով, ստանալով և պահելով, որի ընթացքում կարող է թույլ
տրվել որոշակի փաստաթղթային ձևակերպումների թերացումներ կամ բացթողումներ, ինչը երբևէ չի կարելի դիտարկել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսված ապօրինի շրջանառություն՝ ապօրինի ձեռք բերել, պահել կամ փոխանցել:
՝Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին՝ ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝
՝Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օրինական շրջանառությունը ապահովող, ինչպես նաև դրանց ապօրինի շրջանառությունը կանխարգելող գործընթացների վրա՝:՝
՝Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին՝ ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության (այդ թվում՝ ապօրինի) բնագավառում պետական քաղաքականությունը կայանում է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հետ կապված գործունեության լիցենզավորման, այդ գործունեությանը ներկայացվող պահանջների սահմանման, թմրամիջոցները և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը առողջապահական և բժշկավերականգնողական նպատակներով օգտագործելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման, թմրամիջոցների (հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի) և դրանց շրջանառության հաշվառման, այդ շրջանառության նկատմամբ հսկողության և

վերահսկողության սահմանման, թմրամոլության, ինչպես նաև թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրականացման մեջ:
(...)՝:
՝Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին՝ ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝
՝Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝
1) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հսկելիությունը և վերահսկելիությունը.
(...)՝:
՝Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին՝ ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝
՝Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման վերահսկողության իրականացման լիազորված մարմինների հիմնական լիազորություններն են՝
1) թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառությունը կարգավորող օրենքների, նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը կառավարությանը.
(...)՝:
՝Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին՝ ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Այն թմրամիջոցները, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, ինչպես նաև դրանց պատրաստման գործիքները և սարքավորումները, որոնց հետագա օգտագործումը ճանաչվել է աննպատակահարմար, ոչնչացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
2. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ոչնչացումը իրականացվում է այն դեպքերում, եթե՝
(...)
3) չօգտագործված թմրամիջոցը վերադարձվել է մահացած հիվանդի հարազատներից.
(...)
5) ապօրինի շրջանառությունից առգրավված թմրամիջոցները կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը չեն կարող օգտագործվել բժշկական, գիտական և այլ նպատակներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում՝՝:
՝Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին՝ ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ոստիկանությունը, ազգային անվտանգության, մաքսային և առողջապահության բնագավառի լիազորված մարմինները՝ իրենց իրավասությունների սահմաններում:
(...)՝:
՝Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին՝ ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների

ապօրինի շրջանառության ընթացքում առգրավված թմրամիջոցները, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը և դրանց պրեկուրսորները, ինչպես նաև պատրաստման գործիքներն ու սարքավորումները օրենքով սահմանված կարգով բռնագրավվում են:
2. Սույն հոդվածի առաջին մասում նշված թմրամիջոցները, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը և դրանց պրեկուրսորները, ինչպես նաև գործիքները և սարքավորումները, որոնց հետագա օգտագործումը բռնագրավում իրականացնող մարմինը ճանաչել է աննպատակահարմար, ոչնչացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
(...)
4. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը կանխարգելող մարմինները փորձագիտական գործունեության մեջ օգտագործելու նպատակով կարող են ստեղծել ապօրինի շրջանառությունից բռնագրավված թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հավաքածու՝ հնարավորության դեպքում դրանց պատրաստման տեխնիկական պրոցեսների նկարագրմամբ:
5. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը կանխարգելող մարմինների կողմից ապօրինի շրջանառությունից բռնագրավված թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հավաքածուի ստեղծման, համալրման, նմուշների փոխանցման կարգը և անհրաժեշտ չափաքանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:՝

Դատարանն արձանագրում է, որ՝ Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին՝ ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը պարունակում է մահացած հիվանդի հարազատների կողմից վերադարձված չօգտագործված թմրանյութերի ոչնչացման ուղղակի նորմ, իսկ հոգեմետ նյութերի վերաբերյալ նույն հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 5-րդ կետով և 44-րդ հոդվածով նախատեսված է ընդհանուր նորմ: Այսինքն մահացած հիվանդի հարազատների կողմից վերադարձված չօգտագործված հոգեմետ նյութերը ևս ոչնչացման ենթակա են կամ կարող են օգտագործվել փորձագիտական գործունեության մեջ, սակայն դրանց ընթացակարգը և գործողությունը կատարող մարմնի վերաբերյալ օրենսդրական կամ ենթաօրենսդրական ակտեր չեն ընդունվել:
Միաժամանակ դատարանն արձանագրում է, որ ոստիկանը, ոչնչացման կարգի բացակայության պատճառաբանությամբ, հոգեմետ նյութը կամովին հանձնողից վերցնելուց հրաժարվելու դեպքում, ակամայից կդրդի այդ անձին հանցագործության կատարման՝ այն ապօրինի պահելու, ինչն իր հանրային վտանգավորության աստիճանով առավել վտանգավոր է, քան օրենսդրության չիմացության կամ ընթացակարգի բացակայության պատճառով, մինչ այդ առարկայի ճակատագիրը որոշելը, առանց փաստաթղթային ձևակերպումների, հանձնված իրը վերցնելը:
Վերը նշված պատճառաբանությունները հաշվի առնելով, դատարանը գտնում է, որ սույն գործով ամբաստանվող Արման Գևորգի Սարգսյանը լիազորված է եղել հոգեմետ նյութը հանձնող անձ Անդրանիկ Ամբարդարյանից դրանք վերցնելու, իսկ այդ գործողության կատարման վերաբերյալ փաստաթղթային ձևակերպումներ չտալն ինքնին չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված իմաստով՝ հոգեմետ նյութի ապօրինի ձեռք բերում և պահում դիտարկվել:
Դատարանը չի բացառում նաև այնպիսի դեպքեր, երբ իր լիազորությունների շրջանակում գործող անձը, կամովին հանձնողից, ազատ շրջանառությունն արգելված իրը ձեռք բերելիս նպատակ հետապնդի դրան տիրանալու և տիրապետելու, սակայն այդպիսի դիտավորության

վերաբերյալ անհրաժեշտ է ձեռք բերել բավարար ապացույցներ, որոնք հաղթահարելով անմեղության կանխավարկածը, ուղղակիորեն կհիմնավորեն նման մտադրությունը: Հետևաբար դատարանը գտնում է, որ սույն գործով ապացուցման առարկան կայանում է նրանում, թե արդյուք Արման Գևորգի Սարգսյանը Անդրանիկ Ամբարդարյանից հոգեմետ նյութը վերցնելիս նպատակ է հետապնդել դրան տիրանալու և տիրապետելու:
Անդրադառնալով պաշտպանական կոմի միջնորդությանը՝ Ա.Սարգսյանի աշխատասենյակում խուզարկություն կատարելու մասին արձանագրությունը և դրանից բխող ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հարցին, դատարանը գտնում է հետևյալը.
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝
(...)
5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.
(...)՝:
2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա՝՝:
Ապացույցների թույլատրելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ա.Սարգսյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ՝(...) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով:
Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: (...)՝՝(տե՛ս Արմեն Սեյրանի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔՐԴ/0295/01/08 որոշման 15-րդ կետը):
Զարգացնելով ապացույցների թույլատրելիության վերաբերյալ կատարված իրավական դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը Ս.Հարությունյանի գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ՝... Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների ձեռքբերման գործընթացում էական չեն կարող համարվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի այն խախտումները, որոնցով չեն սահմանափակվել դատավարության մասնակիցների՝ օրենքով երաշխավորված իրավունքները կամ այդ իրավունքներից նրանք չեն զրկվել, ինչպես նաև այն խախտումները, որոնք ստացված փաստական տվյալների հավաստիության վրա չեն ազդել կամ չէին կարող ազդել: Այլ խոսքով՝ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման ժամանակ թույլ տրված քրեադատավարական օրենսդրության խախտումները պետք է գնահատվեն՝ ելնելով դրանց բնույթից, ծանրությունից և վերոնշյալ գործողությունների

արդյունքում ստացված ապացուցողական նյութի որակի և հավաստիության վրա դրանց ազդեցության աստիճանից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացույցն անթույլատրելի ճանաչելը՝ որպես իրավական հետևանք, պետք է տեղի ունենա միայն քրեադատավարական օրենսդրության էական խախտման առկայության պարագայում: Հակառակ դեպքում ապացույցների թույլատրելիության հարցին կցուցաբերվի ձևական մոտեցում, ինչն էլ կհանգեցնի ապացուցողական նյութի անտեղի կորստի:՝ (տե՛ս Սարիբեկ Վարազդատի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ/0189/01/12 որոշման 20-րդ կետը):

Ուսումնասիրելով 2016 թվականի դեկտեմբերի 23-ին կազմված խուզարկություն կատարելու մասին արձանագրությունը, դատարանը փաստում է, որ դրանում թույլ են տրված բացթողումներ՝ այն ստորագրված չէ և չկա նշում այն կատարող անձի վերաբերյալ, սակայն դրանում պարունակում են տեղեկություններ կատարված գործողությունների, մինչ խուզարկությունը սկսելը կամավոր հանձնված իրերի մասին, հանձնողի հայտարարությունը, ինչպես նաև առկա են մասնակիցների ստորագրությունները, ինչպիսի պարագայում դատարանը գտնում է, որ խուզարկությունը կատարող անձի մասին նշումների և վերջինիս ստորագրության բացակայությունը չէր կարող ազդել կատարված գործողության արդյունքում ստացված ապացուցողական նյութի որակի և հավաստիության վրա, հետևաբար այն անթույլատրելի ճանաչելու հիմքերը բացակայում են:

Անդրադառնալով պաշտպանության կողմի այն դիրքորոշմանը, թե մեկ այլ փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում չէր կարող քննարկման առարկա դառնալ Ա. Սարգսյանին մեղսագրվող արարքը, հարուցված գործի նյութերով նոր գործ պետք է հարուցվեր և միայն նոր գործի շրջանակներում քննարկվեր վերջինիս արարքը, ապա նման դիրքորոշումը չի բխում սույն քրեական գործի նյութերից, քանի որ սույն քրեական գործը 2016 թվականի հուլիսի 28-ին հարուցվել է Վռամ Թորոսյանի կողմից 2016 թվականի հուլիսի 21-ին տված հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերի հիման վրա, որոնցում ի թիվս այլոց անդրադարձ կա նաև Ա.Սարգսյանի ենթադրյալ ապօրինի գործողությունների վերաբերյալ, այդ թվում նաև ենթադրյալ թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ, հետևաբար հարուցված քրեական գործի շրջանակներում է եղել Ա.Սարգսյանի գործողությունների ուղղությամբ քննությունը, ինչպիսի պայմաններում նոր գործ հարուցելը կլիներ ոչ իրավաչափ: Ինչ վերաբերվում է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցված չլինելու հանգամանքին, ապա դատարանը գտնում է, որ քրեական գործի հարուցման որոշման մեջ նշվում է քրեական օրենքի այն հոդվածը, որն այդ պահին առերևույթ համընկնում է հարուցման հիմքին, իսկ գործի քննությամբ արդեն հստակեցվում է անձի արարքի քրեաիրավական որակումը, որը չի բացառվում, որ չհամընկնի այն հոդվածի հետ, որի հատկանիշներով հարուցվել է քրեական գործը, ինչն իրավաչափ է և նոր քրեական գործ չհարուցելն ընթացակարգային խախտում չէ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

՝1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

2. Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում՝:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝

՝Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.
3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.
4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.
(...)՝:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:
2. Մեղադրյալի մեղքի և պատասխանատվությունը խստացնող հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները՝:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝
՝Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով՝:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:
2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ՝:
ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով վերը նշված իրավանորմերը, Միրակ Սաքանյանի վերաբերյալ գործով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝
՝...13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունը ճանաչողական գործունեություն է, որն ուղղված է նախկինում տեղի ունեցած դեպքի հանգամանքների հետազոտմանը և վերականգմանը: Քրեադատավարական ճանաչողության բովանդակության և կառուցվածքի բացահայտումը սերտորեն կապված է ապացուցում հասկացության հետ:
(...)
Ապացուցման նպատակը կազմող ապացուցման ենթակա հանգամանքների համակարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում (...):
14. Նշված հանգամանքներն իրենց ամբողջության մեջ կազմում են ապացուցման առարկան, որն օրենքում ձևակերպված է ընդհանուր տեսքով և կիրառելի է բոլոր տեսակի հանցագործությունների համար: Դրա հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ապացուցման առարկայի՝ օրենքում ամրագրված տիպական թվարկումը յուրաքանչյուր գործով ճշգրտվում և լրացվում է հանցագործության քրեաիրավական որակմանը համապատասխան: Սա նշանակում է, որ կատարված իրադարձությունը (ինչպես ամբողջությամբ, այնպես էլ նրա յուրաքանչյուր հանգամանքը առանձին վերցված) յուրաքանչյուր դեպքում պետք է հետազոտել հաշվի առնելով քրեական օրենքով նախատեսված կոնկրետ հանցակազմի հատկանիշները:
15. Ապացուցման առարկա կամ ապացուցման ենթակա հանգամանքներ հասկացության հետ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կապում է՝ապացույցների բավարարություն՝ հասկացությունը:
Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական նյութի հետ, որը

վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Որոշելով
ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ի՞նչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ի՞նչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար:
Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:
Ի տարբերություն ապացուցման առարկայի, ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև ե՞րբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առանձին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե ե՞րբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:
Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրում է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝
1) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,
2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,
3) անմեղության կանխավարկած:
16. Ապացույցների բավարարությունը որոշելու առաջին չափանիշը վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքն է: Վերջինիս Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ՝(...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը: (...)՝:
Զարգացնելով վկայակոչված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներքին համոզմունքը վարույթն իրականացնող մարմնի համոզմունքն է այն մասին, որ առկա ապացույցները բավարար են գործի ճիշտ լուծման համար անհրաժեշտ հանգամանքները բացահայտված դիտելու համար:
17. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ապացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով, այդ պատճառով ՀՀ քրեադատավարական օրենքն օգտագործում է՝ապացույցների համակցություն՝հասկացությունը: Ակնհայտ է, որ

ապացույցները բավարար չեն, եթե՝
1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,
2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,
3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում:
18. Ապացույցների բավարարությունը որոշելու երկրորդ չափանիշը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական որոշումների հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջն է:
Քրեական վարույթի ընթացքում ընդունվում են բազմաթիվ դատավարական որոշումներ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների ապացուցվածության տարբեր աստիճաններ: Օրինակ, քրեական գործ հարուցելու կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշման համար բավարար է նաև այդ հանգամանքների ենթադրյալ ապացուցվածությունը, մինչդեռ մեղադրական դատավճռի դեպքում պահանջվում է այդ հանգամանքների հավաստի ապացուցվածություն:
Ապացույցների բավարարությունը այս տեսանկյունից ընդգծում է ապացուցողական գործունեության շրջանակները, որն ապահովում է այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար անհրաժեշտ հանգամանքների վերաբերյալ ապացուցման սուբյեկտի իմացության չափը:
19. Ապացույցների բավարարությունը որոշելու երրորդ չափանիշը անմեղության կանխավարկածի սկզբունքն է (անմեղության կանխավարկածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը տե՛ս Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 14-րդ կետում):
20. Հիմք ընդունելով սույն որոշման 12-19-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացուցումը քրեադատավարական գործունեության միջուկն է, առանց որի հնարավոր չէ քրեական գործն ըստ էության լուծել և կայացնել այնպիսի դատական ակտ, որը կպարունակի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածում ամրագրված՝ դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերի պատասխանները:
21. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ապացուցումը սերտորեն կապված է ՝հանցագործությունների որակում՝ հասկացության հետ. դրանք հարաբերակցվում են որպես գործունեություն և արդյունք: Հանցագործությունների որակումը ենթադրում է գործով բացահայտված հանգամանքների հետազոտություն, օրենքի իմաստի բացահայտում, կոնկրետ նորմի ընտրություն, այդ նորմում ամրագրված հատկանիշների համադրում բացահայտված փաստերի հետ և որպես արդյունք համապատասխան դատավարական փաստաթղթերում հետևության ձևավորում:՝ (տե՛ս Սիրակ Շավարշի Սաքանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 13-21-րդ կետերը):
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝
՝(...)
3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:
4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:
(...)՝:

ՀՀ վճռաբեկ դատարանը Մ. Հակոբյանի վերաբերյալ գործով, մեկնաբանելով անմեղության կանխավարկածի վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածները, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝
՝Մեջբերված սահմանադրական և քրեադատավարական դրույթները մեկնաբանելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված՝ Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի գործով որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշման համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների կամայական գնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված՝ ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցներով և ոչ թե ենթադրություններով: Այլ խոսքով՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականությունը: Այս հանգամանքը բազմիցս շեշտադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Մասնավորապես, Եվրոպական դատարանը կարևորել է կոնկրետ գործով արդար դատական քննություն կատարված լինելու վերաբերյալ իր համոզմունքի ձևավորումը և նշել է, որ քրեական վարույթի իմաստով արդար դատական քննությունը ներառում է նաև անմեղության կանխավարկածի պահպանումը, ինչը նշանակում է, որ դատավորը չպետք է ելնի այն կանխավարկածից, թե անձը կատարել է իրեն մեղսագրվող հանցանքը, հանցանքի կատարման մեջ անձի մեղավորությունն ապացուցելու պարտականությունը կրում է դատախազությունը և կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի (տե՛ս Թելֆներն ընդդեմ Ավստրիայի (TELFNER v. AUSTRIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 33501/96, կետ 15, ինչպես նաև Նատունենն ընդդեմ Ֆինլանդիայի (NATUNEN v. FINLAND) գործով 2009 թվականի մարտի 31-ի վճիռը, գանգատ թիվ 21022/04, կետ 53)՝ (տե՛ս Մարգար Գագիկի Հակոբյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի մայիսի 08-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշման 13-րդ կետը):
Վերը շարադրված ապացույցների հիման վրա դատարանը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.
- Արման Սարգսյանն աշխատել է ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնում որպես քրեական հետախուզության բաժանմունքի ավագ օպերլիազոր,
- Արման Սարգսյանի վրա դրված են եղել թմրամոլության, թմրաբիզնեսի ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի կազմակերպման պարտականությունները,
- Սեդա Նիկոյանին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով հատկացվել է 10 սրվակ հոգեմետ նյութ, որը բժշկի նշանակմամբ և Արման Սարգսյանի գիտությամբ դեղատնից գնվել է Ս.Նիկոյանի որդու՝ Արմեն Ամբարդարյանի կողմից,
- Սեդա Նիկոյանը մահացել է 2016 թվականի նոյեմբերի 12-ին,
- Սեդա Նիկոյանի օգտագործման համար տրամադրված հոգեմետ նյութից ութ սրվակները չեն օգտագործվել,
- Ս.Նիկոյանի թոռը՝ Անդրանիկ Ամբարդարյանը որոշել է օգտագործված և չօգտագործված

սրվակները հանձնել Արման Սարգսյանին, քանի որ վերջինս ևս առնչություն է ունեցել այդ դեղամիջոցները ձեռք բերելու գործընթացին,
- Արման Սարգսյանը տեղեկություն չի ունեցել, թե չօգտագործված հոգեմետ նյութերն ինչ պետք է արվեն, սակայն այնուամենայնիվ Ա.Ամբարդարյանից վերցրել է դրանք, այդ մասին որևէ գրավոր փաստաթուղթ չի կազմել և մի քանի օր՝ մինչև իր աշխատասենյակում խուզարկություն կատարելու օրը, այն պահել է իր աշխատանքային սեղանի դարակում,
- Արման Սարգսյանի աշխատասենյակում խուզարկություն կատարելուց առաջ, վերջինս քննիչին ներկայացրել է ութ հատ լիքը և երկու հատ դատարկ՝ տրամադրոլ՝ գրառումով սրվակներ:
Դատարանը, ապացույցների գնահատումը կանոնակարգող ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերը նշված պահանջների և ՀՀ վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումների համատեքստում, անմեղության կանխավարկածի պահպանմամբ գնահատելով սույն քրեական գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ, գտնում է, որ անհերքելի և բավարար ապացույցների համակցությամբ, անմեղության կանխավարկածի հաղթահարմամբ չհիմնավորվեց հանձնված սրվակներին տիրանալու և տիրապետելու Արման Սարգսյանի դիտավորությունը:
Ինչ վերաբերվում է Արման Սարգսյանին վկայի կարգավիճակով հարցաքննելու հիմքով վերջինիս ցուցմունքն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանական կողմի միջնորդությանը, ապա դատարանը Ա.Սարգսյանի ցուցմունքը գնահատում է հօգուտ վերջինիս, հետևաբար այն օգտագործման անթույլատրելիությունը հաստատելու հիմքերի առկայության գնահատմանը դատարանը չի անդրադառնում:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝
՝1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե
(...)
2) արարքի մեջ հանցակազմ չկա:
(...)
2. Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:
(...)
5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը:
(...)՝:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի համաձայն՝
՝Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝
1) ապացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը.
2) այդ արարքը համապատասխանում է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին.
3) ապացուցված է արդյոք ամբաստանյալի կողմից այդ արարքը կատարելը.
4) ապացուցված է արդյոք ամբաստանյալի մեղավորությունը տվյալ հանցանքը կատարելու մեջ և, եթե այո, ապա քրեական օրենսգրքի որ հոդվածով, մասով, կետով է նախատեսված այն.
(...)՝:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի համաձայն՝
՝(...)

2. Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տալիս է հաստատող պատասխաններ:՝:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի համաձայն՝
1. Արդարացման դատավճիռը ճանաչում և հռչակում է հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի անմեղությունը՝ այն մեղադրանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ:
2. Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ:
(...)՝:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 67-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանը 2010թ. մարտի 30-ի ՍԴՈ-871 որոշման մեջ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը.
՝(...)
Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած՝՝...կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում...՝ դրույթը կարող է մեկնաբանվել երկու առումով, առաջին՝՝չմասնակցությունը, դա չապացուցված մասնակցությունն է՝՝ կամ ՝՝հանցագործության կատարմանը անձի ապացուցված չմասնակցությունն է՝՝, սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առնվող 35-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը պետք է գնահատվի հենց երկրորդ մեկնաբանման տեսանկյունից, քանի որ, ի թիվս այլնի, ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ արդարացվածն այն անձն է, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կամ որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով:
(...)
Վկայակոչված դրույթների և քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր հասկացությունների (մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 42-րդ կետ) համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, ինչը հավասարազոր է անձի անմեղության փաստի հաստատման, իսկ դատաքննության փուլում ապացույցների անբավարարության հանգամանքը նաև արդարացման դատավճիռ կայացնելու հիմք է:
(...)՝:
Հիմք ընդունելով վերը շարադրված պատճառաբանությունները՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արման Գևորգի Սարգսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքներում պետք է արդարացնել՝ ճանաչելով և հռչակելով վերջիններիս անմեղությունը:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

խափանման միջոցը վերացվում է, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը:
Դատարանը, նկատի ունենալով, որ վերը նշված հիմնավորումներով պետք է ճանաչել և հռչակել Արման Գևորգի Սարգսյանի անմեղությունը, գտնում է, որ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը վերացել է, ուստի նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ‘Ստորագրություն չհեռանալու մասին’, պետք է վերացնել:
Քննարկելով իրեղեն ապացույցների տնօրինման հարցը՝ դատարանը գտնում է, որ թեպետ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին առընթեր ՀԿԳ ավագ քննիչ Ա.Օհանյանը 02.03.2017 թվականին որոշում է կայացրել՝ թիվ 62219916 քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու մասին, սակայն սույն գործով իրեղեն ապացույց հանդիսացող իրերն առնչություն չունեն նշված գործով ապացուցման առարկայի հետ, հետևաբար դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, իրեղեն ապացույց ճանաչված Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում գտնվող՝ տրամադոլ տեսակի հոգեմետ ակտիվ բաղադրատարր պարունակող հոգեմետ նյութը և դատարկ սրվակները՝ պետք է ոչնչացնել:
Միաժամանակ դատարանն արձանագրում է, որ ըստ թիվ 16-3622 եզրակացության, փորձագետի կողմից հետազոտության ընթացքում ծախսվել է 3 սրվակ և հետքերի մի մասը:
Դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո քրեական գործով ապացույց ճանաչված փաստաթղթերը՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարից ստացված գրությունը, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությունից ստացված գրությունը, Ախուրյան բժշկական կենտրոնի բժիշկ ուռուցքաբան Հարություն Կիրակոսյանի կողմից Շիրակի մարզի Ազատան գյուղի բնակչուհի Սեդա Նիկոյանի անվամբ լրացված թիվ 1-138 ամբուլատոր քարտի պատճենը, Ախուրյան բժշկական կենտրոնի բժիշկ ուռուցքաբան Հարություն Կիրակոսյանի կողմից 11.11.2016 թվականին տրված հոգեմետ դեղի համար թիվ 1866 դեղատոմսի պատճենը՝ պետք է թողնել կցված քրեական գործին:
Քննարկելով դատական ծախսերի հարցը՝ դատարանը գտնում է, որ Արման Գևորգի Սարգսյանից այդպիսիք չեն կարող բռնագանձվել, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 168-րդ հոդվածի առաջին մասի 1-6-րդ կետերում թվարկված դատական ծախսերը կարող են դատարանի կողմից դրվել դատապարտյալի վրա:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ և 366-րդ հոդվածներով՝ դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Արման Գևորգի Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնել՝ ճանաչելով և հռչակելով վերջինիս անմեղությունը:
Արման Գևորգի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ‘Ստորագրություն չհեռանալու մասին’, վերացնել:
Դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործով իրեղեն ապացույց ճանաչված, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում գտնվող՝ տրամադոլ տեսակի հոգեմետ ակտիվ բաղադրատարր պարունակող հոգեմետ նյութը և դատարկ սրվակները ոչնչացնել:
Քրեական գործով ապացույց ճանաչված փաստաթղթերը՝ թողնել կցված քրեական գործին:
Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ